

**ԱՊՐԻԼԵԱՆ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 95-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ
Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ**

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԴԵՐՁԱԿԵԱՆ

Կազմակերպութեամբ՝ Թորոնթոյի Միջ-Յարանուանական Մարմնի, Հովանաւորութեամբ՝ Գանատայի Հայց. Առաքելական, Հայ Կաթողիկէ եւ Հայ Աւետարանական Եկեղեցիներու, 1915-ի մեծ ողբերգութեան 95-րդ տարելիցին առթիւ 24 Ապրիլ 2010 Շաբաթ երեկոյ, մասնաւոր Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Երրորդութիւն Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ, հոծ բազմութեան ներկայութեամբ: Պատարագիչն էր Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Հոգշ. Ս. Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեան: Ս. Սեղանին սպասարկեցին միացեալ եկեղեցիներէ կազմուած գեղաձայն Սարկաւազներ ու դպիրներ, իսկ երգեցողութիւնները խիստ տպաւորիչ եւ ներդաշնակ կերպով կատարուեցան միացեալ դպրաց դասի երկսեռ անդամներու կողմէ, խմբավարութեամբ՝ Շահէ Ալթուեանի, երգեհոնահարութեամբ՝ Թալին Գըլըպոզեանի:

Արարողութեան կը հանդիսապետէր Գանատահայոց Առաջնորդ՝ Գերշ. Ս. Բագրատ Ս. Եպս. Գալստանեան, դասին մէջ ներկայ էին Գերյ. Հայր Եղիա Ծ. Վրդ. Քիրեջեան, Հոգշ. Ս. Աբգար Վրդ. Յովակիմեան, Արժ. Ս. Չարեհ Ա. Քհնյ. Չարգարեան, Արժ. Ս. Կոմիտաս Ա. Քհնյ. Փանոսեան, Վերապատուելի Սամուէլ Ալպարեան:

Յաւարտ Ս. Պատարագի, Միջ-Յարանուանական մարմնի անունով Ատենապետ Յակոբ Ճանպազեան ներկաները ողջունելէ ետք, շնորհակալութեան խօսքեր ուղղեց պատարագիչ Հայր Մեղրիկին, սարկաւազաց եւ դպրաց դասերուն, ինչպէս նաեւ Առաջնորդ Սրբազաններուն, որոնք իրեց հայրական բարձր տնօրինութեամբ հովանաւորեցին 24 Ապրիլին նահատակուած զոհերու ի յիշատակ այս երեկոյ կազմակերպուած Սուրբ եւ անմահ Պատարագին ու ոգեկոչման հանդիսութեան:

Պրն. Ճանպազեան յայտնեց նաեւ թէ Գերշ. Ս. Խաժակ Ս. Արք. Յակոբեան կարելոր պատճառով չէր կրցած ներկայ ըլլալ եւ այս առթիւ Սրբազանը իր հայրական ջերմագին յաջողութեան մաղթանքները կը փոխանցէր միասնական մարմնին այս օրուայ ոգեկոչման հանդիսութեան ու յառաջիկայ բոլոր ձեռնարկներուն: Ան գնահատական խօսքերով շնորհակալութիւն յայտնեց նաեւ Բագրատ Սրբազան Գալստանեանին, որ հակառակ իր բազմազբաղ վիճակին, կրցած էր ներկայ գտնուիլ ոգեկոչման Ս. Պատարագին փոխանցելու համար հայրական պատգամը ու իր խօսքը:

Յակոբ Ճանպազեան շարունակելով իր խօսքերը հետեւեալ ձեւով արտայայտուեցաւ. « 1915-ի նահատակները կառչած մնալով քրիստոնէական ոգիին, տուին իրենց կեանքերը հայուն անկորնչելի արժանապատուութեամբ եւ քրիստոնէական անմար հաւատքով: Տեղահանութենէ փրկուած բազում հայեր աշխարհասփիւռ կերտեցին հաւատքի ինքնաբերդեր, մշակոյթի եւ կրթութեան նոր աղբիւրներ, աշխարհի տարբեր երկիրներու ու քաղաքներու մէջ: 1915-ին զոհ գացին մեր ժողովուրդի բոլոր զաւակները անխտիր առանց յարանուանական կամ կուսակցական խտրականութեան:

Այսօր մենք, Թորոնթոյի գաւակներս, հաւաքուած ենք այստեղ միասնականութեան պատուաբեր օրինակով յարգելու յիշատակը նահատակներու. հիմա կը ցնծան անոց տառապած հոգիները ի տես մեր միասնականութեան:

Այսօր 95 տարիներ վերջ առաջին անգամ ըլլալով Պոլսոյ մէջ 100 մշակութային գործիչներ, մարդու իրաւունքներու պաշտպաններ իրենց բողոքի ձայնը կը բարձրացնեն, բացատրութիւն կը պահանջեն Թուրքիոյ ներկայ կառավարութենէն: Արդ՝ կոչ կ'ուղղենք ձեզի, սիրելի հայ ժողովուրդ, սիրելի հայ երիտասարդներ, մեր արդար դատին ճանաչման պայքարին մէջ մէկտեղուի՛նք եւ համահայկական միասնական ճիգերով պաշտպանենք ու հետապնդենք մեր անժամանցելի դատը, որպէսզի վայելենք օր մը մէկ հայրենիք, մէկ ժողովուրդ միացեալ տեսնել հողը հայկազեան:»

Ծանօթ երգչուհի սփրանսօ Սօնա Յովսէփեան հմայեց ներկաները. իր բացառիկ ձայնով ու անսայթաք մեկնաբանութիւններով, նախ մեներգեց Կոմիտասի « Տլէ եաման » ը, ապա Ա.Յէքիմեանի « Կռունկ բարով դառնաս » կտորները, դաշնակի ընկերակցութեամբ Վազգէն Գալճեանի որ արժանացաւ շերմ ծափահարութիւններու:

Ս. Երրորդութիւն Յայց. Առաքելական Եկեղեցւոյ Յոգեւոր Յովիւ՝ Արժ. Տէր Չարեհ Ա. Քիւյ. Չարգարեան օրուայ հանդիսութեան առթիւ իր սրտի խօսքը փոխանցեց յայտնելով « Փառք կու տանք Աստուծոյ որ այսօր մենք մէկ սիրտ, մէկ միտք, մէկ աղօթք եւ մէկ պայքար դարձանք այս եկեղեցւոյ մէջ անպարտելի մեր նահատակներու խնկելի եւ սուրբ յիշատակի առջեւ: Այսօր արդար Աբելի արեան կը միանայ մեր նահատակներու թափուած արիւնը եւ ձեր ու մեր գաւակներու շուրթերով կը բողոքենք երկրէ երկինք:»

Տէր Յայրը շնորհակալութիւններ յայտնեց Առաջնորդ Սրբազանին, Յոգեւոր եղբայրներուն, սարկաւազներուն ու դպրաց դասին, ինչպէս նաեւ համայնքներու բոլոր գաւակներուն: Ապա հրաւիրեց Սրբազանը որպէսզի փոխանցէ իր պատգամը:

Բագրատ Սրբազան «Ո՛ր է մահ քու խայթոցդ, ո՛ր է գերեզման քու յաղթանակդ » խօսքը բնաբան առնելով յաւուր պատշաճի իր պատգամը փոխանցեց եւ հետեւեալ ձեւով արտայայտուեցաւ. « Ես չեմ ուզեր աւելորդ յիշեցնել թէ ինչ է այսօրուան խորհուրդը, որ բոլորս մէկ սիրտ եւ մէկ հոգի, նոյն գոյնով, նոյն հայեացքով, նոյն ապրումով, նոյն մկրտութեամբ ոչ միայն հոս, այլ աշխարհի բոլոր ծագերու մէջ Ս. Էջմիածինէն դէպի Կիլիկիա, դէպի Ս. Երուսաղէմ, Ծիծեռնակաբերդէն դէպի Տէր Չօրի աւազները, Յիւսիսէն-Յարաւ, Արեւմուտքէն-Արեւելք աշխարհի բոլոր քաղաքներու ու գիւղերու, բոլոր երդիքներու տակ գլուխները բարձր, սրտերու մէջ յաղթանակի եւ զօրաւոր ազգ ըլլալու գիտակցութեամբ, մեր նահատակներու յիշատակը որպէս մարտիրոսներ պահած այսօր բոլոր հայերը կ'ընթանան, կը քալեն եւ կը քալեն այս անգամ ոչ թէ աւազներու մէջ, ոչ թէ մեռնելու համար, այլ կը քալեն աշխարհի բոլոր հզօր երկիրներու, մայրաքաղաքներու մէջ կը քալեն ծաղկած ու ծաղկող Յայաստանի եւ Արցախի մայրաքաղաքներու մէջ եւ կ'ըսեն՝ « Ո՛ր է մահ քու խայթոցդ, ո՛ր է գերեզման քու յաղթանակդ:»

« Զրիստոնեայ Յայ ժողովուրդ, մենք ծնունդով իրարմէ տարբեր չենք, մենք նոյն ցեղի, նոյն ճակատագրի, նոյն անցեալի, նոյն ներկայի եւ նոյն ապագայի շառաւիղներն ու ժողովուրդն ենք, ուրիշ բան չունինք մեր կեանքէն փոխանցելիք:»

Սրբազան Հայրը գնահատելով բոլորին ջանքերն ու աշխատանքը, մաղթեց որ այս մեր գործնական եւ աշխոյժ կեանքին մէջ սուգ, ատելութիւն, չարիք, կործանում ու քայքայում չգարնէ մեր դուռը:

Այնուհետեւ, ձեռնարկի ււարտին, սարկաւագ եւ դպիրներու, դպրաց դասի, ինչպէս նաեւ հոգեւորականներէ ու հաւատացեալ ժողովուրդէ կազմուած թափօրը մոմավառ « Տէր, ողորմեա » երգեցողութեամբ առաջնորդուեցան դէպի եկեղեցւոյ շրջափակի « Նահատակներու Յուշարձան »ը, ուր նահատակներու յիշատակին մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն եւ հաւաքական աղօթք կատարուելէ ետք, ծաղկեպսակի գետեղում տեղի ունեցաւ: Միաբերան երգուած « Մեր Հայրենիք » ազգային օրհներգով երեկոն իր ււարտին հասաւ:

Ապա « Մակարոս Արթինեան » սրահին մէջ եկեղեցիներու տիկնանց միութիւններու կողմէ պատրաստուած պատշաճ հիւրասիրութիւն տեղի ունեցաւ: Այս առթիւ « Մարալ Իշխանեան » սրահին մէջ գեղանկարչական ցուցահանդէս մը կազմակերպուած էր, որուն հասոյթը պիտի յատկացուի Վրաստանի հայոց մշակութային ու կրթական կարիքներուն: